

Մամլո հաղորդագրություն

12 փետրվարի, 2013թ, Սոֆիա

«Օգնել երկրագնդին» թեմայով Ֆրանկոֆոն մրցույթի հայտարարություն

«Օգնել երկրագնդին» թեմայով մրցույթն անց է կացվում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) միջոցառումների շարքում և նվիրված է շրջակա միջավայրի պահպանմանը: Մեր երկրագնդի ապագայի նկատմամբ խորը մտահոգությունը հնչել է Ռիո+20 կոնֆերանսին, և կոչ է արվել գործել էկոպատասխանատվությամբ: Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների ֆրանսերենը ուսումնառող երիտասարդների կողմից նկարների միջոցով պատկերված «կանաչ գաղափարները» լավագույնս կնպաստեն ֆրանկոֆոնիայի արժեքների նկատմամբ առավել զգայունությանը:

Մրցույթն ուղղված է գրաֆիկայի, իլյուստրացիայի, կոլլաժի, լուսանկարի նկատմամբ հետաքրքրություն ունեցող 18-ից 23 տարեկան երիտասարդներին, իրենց երևակայությունն ազատ դրսևորելու և գաղափարները ցանկացած ոճով ներկայացնելու համար: Մասնակիցները պետք է պատասխանեն «Ինչպես եք Դուք պատկերացնում մեր երկրագնդի ապագան» հարցին, այն պատկերելով պաստառի վրա և հավելելով ֆրանկոֆոն տեքստով: Որևէ սահմանափակում վերը նշված նկարի տեսակի ձևավորման և թեմատիկ բովանդակության արտահայտման մեջ նախատեսված չէ:

Մասնակիցները պետք է տիրապետեն ֆրանսերենին, լինեն Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի Տարածաշրջանային կենտրոնի (CREFECO) անդամ-երկրների քաղաքացիներ (Ալբանիա, Հայաստան, Բուլղարիա, Յուգոսլավիայի նախկին հանրապետություն Մակեդոնիա, Մոլդովայի Հանրապետություն, Ռումինիա): Աշխատանքների գնահատումը կավարտվի մինչև 2013թ-ի ապրիլի 15-ը:

Մրցանակների շարքում՝ 3-շաբաթյա լեզվաբանական դասընթաց Շվեյցարիայում, Ժնևի Համալսարանում – Լեզուների տուն, 2-շաբաթյա լեզվաբանական դասընթաց Ֆրանսիայում, CAVILAM-Alliance française, բելգիական կոմիքսների հավաքածու և բազում այլ նվերներ:

Ամբողջական տեղեկատվությունը կարող եք գտնել Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի Տարածաշրջանային կենտրոնի (CREFECO) կայք-էջում: www.crefeco.org

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը (ՖՄԿ) անդամակցում է 57 երկիր և կառավարություն ու 20 դիտորդ www.francophonie.org

Կոնտակտ. ԱԿԵՏԿ, Բուլղարիա, Սոֆիա, Մոնտեվիդեո-21:

Հեռախոս. (+359 2) 955 59 71, (+359 2) 489 48 45

Ֆաքս. (+359 2) 955 59 77

Էլ փոստ. info@crefeco.org